Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-960[1]-10.08.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.1-րդ հոդվածի 2-րդ մասում՝ <<կատարած աշխատանքների մասին կիսամյակային հաշվետվություններ ներկայացնելու>> բառերը փոխարինել <<կատարողականի գնահատման>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

<<Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ քաղաքացիական ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում քաղաքացիական ծառայողի ներկայացրած կատարողականի գնահատման արդյունքների վրա:>>:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկության

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ա. Զաքարյան	<<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետում լրացվող 3.1 մասի առաջին նախադասությունից հետո ավելացնել <<Առանձին դեպքերում կատարողականի հիման վրա պարգևատրումը կարող է կատարվել նաև <<Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքով սահմանված քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի այլ տեսակներով՝ խրախուսելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ>> բառերը:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (Օրենք) 31-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները, որոնք իրավասու պաշտոնատար անձի կողմից կարող են կիրառվել նաև քաղաքացիական ծառայողի կատարողականի արդյունքների հիման վրա: Ուստի, առաջարկում եմ <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում

		առաջարկվող լրացմանը անդրադառնալ քաղաքացիական ծառայության համակարգում կատարողականի գնահատման ինստիտուտի գործնական կիրառումից հետո: